

Յու նուար 21, 1948

Մեծայարգ
Տիար Պետրոս Մանուկեան
Ատենապետ պատ/ հոգաբարձութեան
Տիթրոյտի համայնքին,

Ձեր Դեկտեմբեր 8 թուակիր նամակը ստացած ենք: Մեծ մտահոգութիւն է մեզի համար՝ որ տակաւին չկրցանք հոգեւորական մը ղրկել Ձեզ: Վստահ եղէք սակայն որ մեր կարելի չէ պիտի ընենք՝ որ առաջին անթիւ կարգադրենք ու հոգեւորական մը ղրկենք Ձեր եկեղեցւոյն, որ արդարեւ մեր Վիճակի ամենէն կարեւոր եւ աշխոյժ եկեղեցիներէն մին է:

Բարիզի Տէր Պետրոսը կ'իմանանք որ Գալիճորնիա կուգայ: Իսկ Տ. Հմայեակ Վարդապետը չենք կրնար ղրկել Ձեզ՝ զանազան պատճառներով, որոնցմէ ամենակարեւորը այն է՝ որ Քանատայի մէջ նոր գործ սկսուած է եւ չենք ուզեր որ չսկսած քանդուի այն: Մինչեւ Ապրիլի կէսը եթէ Սիոն Սրբազանը հոգ տանի Ձեր եկեղեցւոյն՝ Ապրիլի կէսին պիտի կրնանք Ձեզ ղրկել հոգեւորական մը, հաւանաբար Տ. Իսահակ Վարդապետը, որ այժմ Առաջնորդարանիս այցելու հովիւն է:

Գալով փոխանորդութեան ծախքին՝ արդէն գրած էինք Ձեզ թէ երեսփոխանական ժողովի որոշումը կարելի չէ փոխել այս տարուան համար: Եթէ կը խորհիք թէ կարելի է ուրիշ կարգադրութիւն մ'ընել՝ կ'ուզենք լսել Ձեր կարծիքը: Տիթրոյտ այնքան մեծ է եւ կարեւոր՝ որ կը կարծենք թէ գէթ առայժմ Սիոն Սրբազանի համար քաւական գործ կայ կատարելիք այդտեղ: Սրբազանին ալ այս ուղղութեամբ գրած ենք արդէն:

Ուստի՝ յանձնարարելով Ձեզ որ սպասէք մինչեւ Ապրիլի կէսը՝ երբ պիտի կրնանք կարգադրութիւն մ'ընել:

Մնամք հայրական շերմ սիրով
Աղօթաբար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Detroit

Յուլիուս 28, 1952

Գերաշնորհ
Տ. Սիոն Եպս. Մանուկեան
Հոգեւոր Հովիւ Ս. Գովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ
Տիֆրոյս, Միչ.

Սիրելի Սրբազան,

Մայր Եկեղեցւոյ եւ Մշակոյթային Տան Շինութեան
Կեդր. Զանձնաժողովի կար մը անդամներ Առաջնորդ Սրբազան Հօր
Հետ միասին ձեր համայնքը պիտի այցելեն Փետրուար 10-ին: Այս
առիթով պիտի զբաղին Մայր Եկեղեցւոյ համար կատարուելիք հան-
գանակութեան գործին վերաբերեալ կազմակերպական աշխատանքով:

Ուստի Փետրուար 11-ին, 1952, Երկուշաբթի երեկոյեան
համար հաճեցէք ժողովի հրաւիրել այն ազգայինները որոնց անուն-
ները կը ներփակենք առանձին թղթով մը:

Յուսալով որ ամբողջովին վերագտած էք Ձեր Զիգիթական
առողջութիւնը եւ մաղթելով Ձեզ յաջողութիւն ի գործս բարիս,

Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Մնամք աղօթակից

Փոխանորդ Առաջնորդի Հայոց
Ամերիկայի

Detroit

Փետրուար 22, 1952

Գերաշնորհ
Տ. Սիրոն Եպս. Մանուկեան
Նախագահ պատ. Հոգաբարձութեան
Տիֆրոյտի Համայնքին,

Ստացած ենք ամսոյս 11 թուակիր Ձեր տեղեկագրութիւնը
որով կը յայտնէիք թէ Ձեր նախագահութեամբ կատարուած է Համայնքի
Հոգաբարձական մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընտրեալ-
ներուն ցանկը կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի առնելով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով
ընտրուած են եւ կը վայելեն ընտրողներու մեծ մասին վստահութիւնը
իրբեւեկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր եւ պատուական անդամներ,
այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը հետեւեալ կարգով. —

Տեարթ Վահրամ Պոյաճեան
Յարութիւն Պուտազեան
Հայրապետ Միքայէլեան
Եղուարդ Սարգիսեան
Արշաւիր Եղիսէեան
Բիւզանդ Մալեան

Կ'օրհնենք Հոգաբարձութեան նորընտիր բոլոր անդամները
եւ վստահ ենք որ անոնք պիտի աշխատին մեր սուրբ եկեղեցւոյն պայ-
ծառութեան եւ Տիրոջը փառքին համար: Մաղթելով կարողութիւն եւ առաջ-
նորդութիւն ի Տեառնէ, կը ցանկանք որ անոնք միասնաբար բոլորեն ար-
դիւնաւոր գործունէութեան շրջան մը:

Անմիջապէս որ Հոգաբարձութիւնը իր դիւանը կազմէ, հաճե-
ցէք տեղեկագրել Առաջնորդարանս:

Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Մնամք աղօթակից

Փոխանորդ Առաջնորդի Հայոց
Ամերիկայի

Հոկտեմբեր 22, 1954

Պատուարժան
Միական Խորհուրդ
Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցույն
Տիֆրոյիս.

Ազնիւ սիրելիք.

Իր ժամանակին ստացած ենք Ձեր սիրելիութան նամակը որով նկատի ունենալով Ձեր Համայնքի ընդարձակութեան կարեւորութիւնը կը խնդրէիք որ Հոգեշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանը նշանակաւինք իբրեւ Հովիւ Ձեր ծուխինս:

Համայնքիդ ազգայիններէն եւ Թեմական Պատգամաւոր Տիար Ալեք Մանուկեան, արդէն առիթ ունեցած է խօսելու Հայր Սուրբին հետ, անոր հաւանութիւնը ապահովելու այդ պաշտօնին Համարս:

Մենք ալ Թեմական Խորհուրդի վերջի նիստին մէջ ներկայացուցինք Ձեր խնդրանքը եւ Հայր Սուրբը փափաքեցաւ որ իրեն պատեհութիւն տրուի որպէսզի պատասխան աւել առաջ անգամ մը Ձեզ հետ խորհրդակցելով հասկնայ թէ ինչ են իրմէ Ձեր պատած ակընկալութիւնները:

Հայր Սուրբը այս օրերս Բիիվլէնա կը գտնուի եւ զուրկ կարող էք այն տեղի Միական Խորհուրդի միջոցաւ յարաբերութեան մէջ մտնել անոր հետ եւ Ձեր կարգադրութեան արդիւնքը մեզ հազարդել մօտաւոր թուականաւ մը:

Մնամք յաջողութեան մաղթանքներով եւ Հայրական սիրով ողջունիւք.

Ազօթարար

ՄԱՄԱՐԻ ԱՐՁԵԳԻՍԿՈԳՈՍ
Տեղապահ Առաջնորդութեան
Հայոց Ամերիկայի

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՏԻԹՐՈՅԹԻ Ս. ՅՈՒՀ. ՄԿՐՏԻԶ
ՀԱՅՑ. ԵԿԵՂ. ԵՑԻՈՑ
ՏԻՔԵՐԻՍ ՄԻՇԿԻՆԵ



BOARD OF TRUSTEES
of St. John's Armenian Church
1335 OAKMAN BOULEVARD
DETROIT 6, MICHIGAN

Handwritten signatures and notes in Armenian script.

Սեպտեմբեր 1, 1954

Գերշ. Ս. Մամբրէ Արքեպիս. Գալճայեան
Նախագահ Պատ. Թեմական Խորհուրդի
Նիւ Եորք, Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր.

Եկեղեցւոյս Մխական Խորհուրդը իր Օգոստոս 31, 1954 Նիստին
մէջ դարձեալ նկատի առնելով Համայնքիս գործերուն ընդարձակութիւնը
եւ Հովիւին վրայ ծանրացող պատասխանատուութեանց մեծութիւնը, որոշեց
խնդրել Ձեր Սրբազնութենէն որ բարեհաճիք Հողշ. Ս. Թորգոմ Վրդ. Մա-
նուկեանը տրամադրել մեր Եկեղեցւոյ ծառայութեան իբրեւ Քարոզիչ եւ
կրթական գործերու ընդհանուր Վերատեսուչ:

Կուզենք Ձեր մասնաւոր ուշադրութեան յանձնել սա պարագան
թէ Մեծազոյն Տիֆրոյթի այս շրջանը որ Ամերիկահայութեան մէկ հոծ
զանգուածը կը ներկայացնէ, արդար չէ որ իր հոգեւոր սնունդին մա-
տակարարման համար ունենայ միայն մէկ հոգեւոր պաշտօնեայ:

Յուսալով որ մեր խնդրանքին ընդառաջ պիտի երթաք ի պայծառու-
թիւն Ս. Եկեղեցւոյս, մատչիմք ի համբոյր Ձեր սուրբ աջոյն,

Որդիական ակնածանօք

Ի դիմաց Մխական Խորհուրդին

Նախագահ
Handwritten signature of the Chairman

Արեւնապետ
Handwritten signature of the Secretary

Յետ Գրութեան. - Այս նամակին օրինակը զրկած ենք Հող. Ս.
Թորգոմ Վրդ. Մանուկեանի:

Քր. 712
Ապրիլ 27, 1956

Արժանաշնորհ
Տ. Անուկ ՔՇԿ. Գաղափարական
Նախադաս Միակամ Խորհուրդի
Մ. ՊՎՏ. Եղբորդ Եկեղեցույ
Տիկերս յՔ.

Սիրելի Տեր Անուկ,

Ստացած ենք Գաղափարական Միակամ Խորհուրդից զիտանի ստորագրութիւնը կրող ամսաթիւ 2 թուակիր նամակը, որուն բովանդակութեան իրազեկ եղանակով Թեմական Խորհուրդը եւ վեզելին նիտին ճշշո:

Ի գաղափարական յիշեալ գրութեան ճշշ շօշափում միտնուի այսու կը յայտնենք թէ նախորդ ամսուան նաւիթին անձնապէս ներկայացանք Արտաքին Գործոց Ենթարարարուպար Պրն. ՆՐԱՊՐԻ ՆԱՎՔԸ Կրտսերի եւ պարզօգիտի վիճակիս կրօնական եւ ազգային իրաւասու հանդամանքս նոյն ամեն յայտարարեցինք թէ մեր թեմի Թուիտնուի ճշշ յարաբարիտիան օրինակութեան պարտանանաչութիւնը օրեւէ ձեռով խնդրոյ ամսրիս չի կրնար ըլլալ եւ մեր Եկեղեցույ եզան վերադրումները բացարձակապէս զրգարութիւն են:

Նաաղափարութիւնը ըստ զիտէ հշմարութիւնը եւ մեր Եկեղեցույ աննապաս վերադրումներուն կարեւորութիւն անգամ չի ստացուի եթէ անբարձաւի երկու յիւնը կը պարզօգիտ անդրոյ ճշշ ամենք ճշշ մեր լաւ կրէլայ որ անգական ճամբուի խորհուրդը Լապկ եզան լուսարեւութիւնները. վերեւ արուած բացարձակութեան գրայ հիմնուած:

Մեր կեննեթն ներս յարաբարիտ հասուածի մը զրան լուսարեւութեան շառ կարեւորութիւն սույն ալ թեքեա անձինն է. երբ որպարարաւ մեր կաաղափարութիւնը չի եննարեալիք ըմբռնեցու:

Նայտնելով վրայ յիշեալները առ ի գիտութիւն եւ մաղթելով ի ձեռանէ փաշտութիւն:

Մեաք օրոյ սզնուի
Ապրիլ

ՄԱՄԱՐԻ ԱՐՏԱԳՐԱՊԵՏ
Առաջնորդ Լայոս Անթրիկայ

ՔՐԻ 1562
Օգոստոսի 14, 1957

Արժանացնո՞ւմ եմ
Տ. Առնակի ՔՀՆՅ. Գառապրեան
Նախագահ Միակն Խորհուրդի
Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ
Տիրոջը:

Միտքի Տէր Առնակ,

Շրուստդէն Պատրիարքարանէն ստացուած նամակէ մը
կը տեղեկանեմք. թէ Ձեր Համայնքէն Դոկտանէն Գոնարանեան անու-
նով երիտասարդ մը, ըստ նամակագրին, Ձեր կարգադրութեամբ գացած
է վանք Հեռեւեկու Հայց Եկեղեցւոյ վարդապետական եւ ծիսակառ-
քական դասընթացի եւ ապա ընդգրկելու Եկեղեցականի սպառելզը:

Եթէ Հաստատ է ասիկա, ուրեմն երիտասարդին Շրու-
ստդէն ժառանգաւորաց Կարծարան մտնելու կարգադրութիւնը պէտք
է եղած ըլլալ մասնորոգարանիս Հաւանութեամբ ու միջոցաւ Պա-
փաթիկի է գիտնալ թէ Յովհաննէս Գոնարանեանը, որուն մասին կը
տրուի լաւ յանձնարարութիւններ, ինչպէս գացած է Հուն եւ Եր-
կը հոգայ անոր ուսանողական ծանցները եթէ ունի բարեբաբ մը Հա-
նցելէ մեզի տալ անոր անուն ու հասցէն:

Ձեր եւ Պատուարժան Միակն Խորհուրդի վրայ պար-
տականութիւն կիյնայ մեզի տալ Հարկ եղած լուտարանութիւնը ու-
սանող Գոնարանեանի Շրուստդէն գտնուելուն մասին:

Յիշեցնելով Ձեզ եւ Միակն Խորհուրդի բոլոր անդամ-
ները եւ մազթելով Եկեղեցանուէր Ձեր գործոց յաջողութիւն:

Մեծ շնորհակալ սիրոյ ոգով
Ազ Քարաբ

ՄԱՍԻՐԻ ԱՐՁԵՂԻՍԿՈՂՈՅ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 3071
Դեկտեմբեր 23, 1957

Արժանաշնորհ
Տ. Առնակ ՔՀՆՅ. Գասպարեան
Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ
Տիֆրոյթ.

Սիրելի Տէր Առնակ.

Ստացած ենք ամսույս 2 թուակիր Ձեր նամակը, որով կը
խնդրէիք քահանայ ձեռնադրել Առաջնորդարանին սան Տիրացու Կարապետ
Փափազեանը, Եկեղեցւոյ վրայ, իբրեւ գործակից հովիւ:

Թեմական Խորհուրդը այս տարեշրջանի հերթական իր առա-
ջին նիստին մէջ իսկ նկատի առաւ Ձեր խնդրանքը, եւ հաստատեց Միական
Ժողովից որոշումը: Նկատի ունենալով Տիրացու Կարապետ դեզ չէ ստա-
ցած Աւագ Սարկաւազութեան աստիճան, հարկ պիտի ըլլայ տրամադրել եր-
կու կիրակի. առաջին կիրակի իրեն շնորհելու սարկաւազութեան Երգ ա-
տիճանը, յաջորդ շաբաթ օրը կոչումը եւ կիրակի առաւօտուն ալ քահանա-
յական ձեռնադրութիւնը կատարելու:

Աւելի շուտ փութացնելու կարելիութիւնը չունենալով, սրբ-
ուած ըլլալով որ մինչեւ բուն բարեկենդանի կիրակին թեմական այլ գոր-
ծերով զբաղուած պիտի ըլլանք, կը մտածենք Տիրացու Կարապետի ձեռնադ-
րութիւնը կատարել Մեծ Գահոց մէջ, հաւանաբար Փետրուար 23ին իրեն տա-
լու Աւագ Սարկաւազութեան աստիճան եւ Մարտ 2ին ալ կատարելու քահանա-
յական ձեռնադրութիւնը: Եթէ այդպէս ըլլայ, նորրեման իր քառասունընէն
կեւիւն Մողկազարդի եւ նոյն կիրակի կը մատուցանէ իր անդրանիկ Ս. Գա-
տարազը: Եթէ յիշեալ թուականները Ձեզի յարմար են, հաճեցէ՛ք ձեզ տեղեակ
պահել որպէսզի մեր ժամանակացոյցին վրայ արձանագրենք:

Այս առթիւ կը շնորհաւորենք Միական Ժողովի իր կայացուցած
գեղեցիկ որոշումին համար եւ մեր խնդակցութիւնը կը յայտնենք, Ձեզի եւ
պատուարժան Միական Խորհուրդի ու ենթակայ մարմիններու. իսկ Ս. Մենզեան
եւ Ամանորի առթիւ մեր սրտագին բարեմաղթանքները կը յայտնենք Ձեզ եւ Տի-
րացու Կարապետ փափազեանի:

Մեամբ հայրական սիրոյ ողջունելու
Ազօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐԲԵԳՈՍԿՈՍ
Առաջնորդ Ամերիկայի Հայոց

Քի. 3089
Յուլի 2, 1958

Արժանաշնորհ
Տ. Առնակ ՔՆՅ. Գաղափարական
Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Յովհ. Ակրաթի Եկեղեցու
Տիբրոյթ.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք պատուարժան Միական Խորհուրդի 1957 Պհկ. 24 թուակիր նամակը, որով կը կրկնուէր խնդրանք թէ ժամանակը թշուականաւ քաշուայ ձեռնադրէինք Առաջնորդարանիս սան Տիրացու Կարապետ Փախազանցը Պհկ. 23 թուակիր մեր պաշտօնագրով, ի պատասխան Խորհուրդի Պհկ. 2 թուակիր նամակին, յայտնած էինք մեր Հաւանութիւնը առ այդ:

Եթէ մեր պատասխանը ուշացած էր, պատճառը այն էր որ ըստ թեմական Կանոնադրութեան պէտք էր որ ձեռնադրուէին թեկնածուքի եր ներկայացնէինք թեմական Խորհուրդի Հաւանութեան Ատիկա ընկէն ծագող ձեզի գրեցինք վերոյիշեալ թուակիրը:

Արդէն այժմ տեղեկ էր որ Տիրացու Կարապետ Փախազանի ձեռնադրութեան թուակիրը պիտի ըլլայ Փետրուար 29 /Օտարկաւորութեան վեց ամսիկանի/ եւ Մարտ 2ին քաշուայութեան Այս թուակիրները կը մնան անփոփոխ, քանզի Յուլի 26ին պէտք է նիւ Երզնէ մէջ նախագահնք Խորհեան Հայրիկի մահուան 50ամեակի առթիւ մատուցուիլը արարողութեան եւ տեղի ունենալիս Հանգրուաննք:

Հաղորդելով զայս առ ի գիտութիւն եւ օրհնելով Եկեղեցու շէն Ձեր գործերը.

Մեծի սիրոյ ողջունի
Ազ. Մարտի

ՄԱՐԿԷ ԱՐՄԵՆՍՆԱՊԵՆ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Մարտ 28, 1958.

Արժանապատի:
Ց. Ասնակ ՔՆՅ. Գառգարեան,
Հոգեւոր Հոգիւ եւ Նսխազահ
Ս. Յովհաննէս Հայր. Եկեղեցւոյ
Պատուարժան Ծրագրան Խորհուրդի,
Տիֆրոյթ - Միշիգոն.

Ազնիւ Սիրելիք Մեր.

Այսու կուգանք կրկին շնորհաւորել ձեզ որ ունեցաք Համայնքիդ
Օգնական Հոգիւ՝ նորոնձայ Ց. Տիրան Թահանայ: Կը Հաւատանք որ ան իր
գործունէութեամբ եւ նուիրումով պիտի արգարացնէ իր վրայ մեր ունեցած
յոյսերը:

Յայտնի է ձեզ որ Առաջնորդարանս Հոգեւոր պաշտօնեաներու պակասի
Հետեւանքով կը գտնուի ծանր պատասխանատուութեան մը տակ, եւ մինք պարտինք
երբեմն մեր կամքէն անկախ ընել կարգադրութիւններ, շանալով նաւազագոյն
խանգարումը բերել մեր եկեղեցւոյ ընթացիկ կեանքին:

Ահամա, Հարկադրուած ենք կարգ մը Համայնքներու Հոգեւորականներ,
ամսուայ մէջ գէթ Կիրակի մը ուրիշ Համայնք մը զբիւլ պաշտօնով: Նպատակ
ունինք ապագային Տէր Տիրանը, եւ երբեմն ալ Տէր Ասնակ, զբիւլ Քլիվլենտի
Համայնքին, Ս. Գառարագ մատուցանելու:

Մինչ այդ, ԵկրոնՔոնքի Ա. Յակոբ Եկեղեցին, որ աւելի քան երկու
տարիներէ ի վեր առանց Հոգիւի մնացած է, Տոնական այս օրերուն փակ մնալու
Հարկադրանքին տակ կը գտնուի: Հետեւաբար կը Հրահանգենք որ Աւագ Եարթուն
Համար, Ց. Տիրան երթայ ԵկրոնՔոնք, Հոգեւոր միջնորդութիւն բերելու մեր
փոքրիկ բայց խիստ պատուական Համայնքին: Այս կըլլայ Աւագ Հինշարթի,
Քարթաթ, Եարթ եւ Զատիկի Կիրակին:

Յայտնելով մեր կանխադրեալ շնորհակալութիւնները եւ մազթելով
ձեզ Ս. Զատիկը, մնա՛ք Հայրական Սիրոյ Ոգչունիւ:

Ազօթարար՝

ՄԱՄԱՐԻ ԱՐՅԵՊՍ. ԳԱԼՏԱՅԵԱՆ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 651
Հոկտեմբեր 23, 1959

Մեծայարգ
Տիար Սիմոն Մոզեան
Ատենադպիր Միական Խորհուրդի
Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Տիթրոյթ.

Յարգելի Պրն. Մոզեան,

Առաջնորդ Արքայան Հայրը ստացած է Հոկտ. 15 Թուակիր Զեր նամակը: Յանձնարարուած ենք Ձեզի հաղորդել թէ Առաջնորդարանի հետ եղած ծուխերուն պաշտօնական թղթակցութիւնները պէտք է ստորագրուած ըլլան նախագահ հովիւին եւ Միական Խորհուրդի դիւանին կողմէ, ինչ որ չի լրացներ Զեր վերոյիշեալ թուակիր գրութիւնը:

Նորին Արքայանութիւնը ուրախութեամբ կը նկատէ ձեր նամակէն որ "Միական Խորհուրդը որեւէ առարկութիւն չունի տրուած որոշման հանդէպ": Եւ իբրեւ լուսարանութիւն կուզէ կրկնել այն հաւաստումը ինչ որ գրուած էր տարւոյս Հոկտ. 1 եւ թիւ 602 պաշտօնագրին մէջ, որով ձեզի կը հաղորդուէր որոշումը ըստ հետեւեալին.

"Նկատի ունենալով որ Վոցիկընի Ս. Գէորգ եւ Իսթ Ս. Լուիզի Ս. Եղեղեցիներու ծուխերը անհովիւ են, եւ նկատի ունենալով որ անոնք նորակազմ ծուխեր են եւ պէտք ունին հոգեւոր հիպիւի ներկայութեան կազմակերպուելու համար, Եկեղեցւոյդ գործակից հովիւ Արժ.Տ. Տիրան ԲՀՆյ. Փափագեանն առժամայ հանգամանքով նշանակած ենք հոգեւոր հովիւ այս զոյս ծուխերուն:"

Արքայան Հայրը խորապէս կը գնահատէ պատուարժան Միական Խորհուրդիդ գոհողութիւնները, քայք միւս կողմէն անշուշտ պէտք է հոգատար ըլլալ նաեւ թեմի այն եկեղեցիներուն, որոնք զուրկ կը մնան տեւական հոգեւոր մատակարարութենէ: Այս պարագան անտարակոյս որ կը մտահոգէ նաեւ զձեզ եւ ձեր յարգոյ պաշտօնակիցները:

Չայս հաղորդելով ձեր սիրելիութեան առ ի գիտութիւն.

Մնամ խորին յարգանք

Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ

Ymruyts

St. John's Armenian Church



ՄԲ. ՅՈՎԷ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

1335 OAKMAN BOULEVARD

★

TOWNSEND 6-9122

★

DETROIT 38, MICHIGAN

REV. ARNAK KASPIRIAN, PASTOR
3289 PASADENA AVENUE
DETROIT 38, MICHIGAN
TOWNSEND 6-7563

Յուլիս 23, 1959

Գերաշնորհ
Տ. Սիոն Արք. Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք, Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ինչպէս Ձեր Սրբազնութեան ծանօթ է, Տիթրոյթէն Պր. Խորէն Թովմասեանի առաջնորդութեամբ Ս. Եջմիածին գացող ուխտաւորներու խումբ մը ճամբայ պիտի ելլէ Օգոստոսի սկիզբը եւ Երեւան պիտի հասնի Ս. Աստուածածնայ տօնին օրը: Պր. Թովմասեան դիմեց ինձի որ Վեհափառին ուղղուած խնդրագիր մը գրեմ ներկայացնելով Նորին քաղաքիս Վեթերանները, որոնք Եկեղեցւոյս կողքին մարզարան մը պիտի կանգնեցնեն եւ որոնք վերջերս շատ աւելի գործօն մասնակցութիւն մը կը բերեն մեր Եկեղեցւոյ կեանքէն ներս:

Պատասխանեցի որ միակ անձը որ Վեհափառը պաշտօնապէս կը ճանչնայ եւ լիազօր է նման խնդրանքներ ներկայացնելու մեր Թեմին Առաջնորդն է եւ հետեւաբար այս խնդրանքը պէտք է ներկայացնել Գեր. Տ. Սիոն Արք. Մանուկեանին: Եւ ենթադրելով որ Յուլիսի կէսերուն Տիթրոյթ կը հանդիպիք Ձեր Ռէյսին երթալու ճամբուն վրայ, սպասեցինք: Եւ հիմա տեսնելով որ Յուլիսի կէսը անցաւ եւ դուք Տիթրոյթ չէք հանդիպած, այդ խնդրանքը գրաւոր կերպով կը նենք ձեզի: Աւելցընեմ որ այս խնդրանքը Փխական Խորհուրդին կողմէ չի գար, Պր. Թովմասեան ինձի դիմեց եւ ես հաւանութիւնս յայտնելով ձեզի կը դիմեմ:

Պր. Թովմասեան կը խնդրէ որ նամակով մը խնդրէք Վեհափառէն որ մեր Հայ Վեթերանները քաջալերող պաշտօնագիր մը կամ կոնդակ մը գրէ, որպէսզի այս երիտասարդները աւելի ամուր կապուած զգան Մայր Աթոռին եւ այդ գիրը շրջանակի մը մէջ պահեն իրենց կառուցանելիք շէնքին մէջ: Դուք ծանօթ էք կացութեան եւ յիշեալ կազմակերպութեան եւ վստահ եմ որ պատշաճը պիտի տնօրինէք:

Որդիական սիրով եւ ակնածանօք մատչիմ ի համբոյր ձեր ս.աջոյն,

աղօթարար

Arnak Kaspirian

Քի. 1740
Դեկտեմբեր 7, 1960

Մեծայարգ
Տիար Ազատարգ Ասրգիսեան
Առեւտրային Միակիւն Խորհուրդի
Ա. Յովհաննէս Մկրտիչ Մկեղեցեայ
Տիֆրոյթ.

Սիրելի Գրն. Ասրգիսեան,

Վերջերս մեր ուշադրութեան յանձնուեցաւ մեր թեմի հոգեւոր
հոգիւններէն մտանց շարքաւոր մտաւարար սակց. եւ խնդրանք մա-
տուցուեցաւ թելադրելու պատկան Միակիւն Խորհուրդներուն որպէս զի
նկատի առնեն այս կարեւոր պարագան, ինչպէս նաեւ պարուտար սղու-
թիւնը եւ պատշաճ քանակով յանելում կատարեն իրենց հոգիւններու
շարքաւորներն վրայ:

Մեզի կը հազարհազի թէ մեր համայնքի զոյգ հոգիւններն ալ
վերոյիշեալ գրութեան մէջ կը գտնուին, ուստի, կը յանձնարարենք
պատուարժան Միակիւն Խորհուրդից որպէս զի առ ի գնահատութիւն ի-
րենց նախնայ ծառայութեան, կարեւոր յանելում ընէ մեր հոգեւոր
հոգիւններու մտաւոր թոշակին վրայ:

Մաղթելով պատուարժան Միակիւն Խորհուրդից յաջողութիւն եւ
Առաւելոյ օրհնութիւնները.

Մեամբ Տիրուանց օրոյ ողջուելու
եւ օրհնութեամբ
Ազօթարար

Սրոն ԱՐՇԵՐՍԿՈՂՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1719
Նոյեմբեր 30, 1960

Մենայարդ
Տիար Եղուարդ Աարգիսեան
Ատենապետ Միական Խորհուրդի
Ս. Թովհանէս Սկրտիչ Եկեղեցւոյ
Տիժրոյթ.

Սիրելի գրն. Աարգիսեան.

Դեկտեմբեր 23ին մենք թեմական այցելութիւն պիտի անց
ուծ Ս. Լուիզի Ս. Եղուարդ եկեղեցւոյ համայնքին, որ պիտի ու-
նակմբէ եկեղեցւոյ օժման տարեդարձը: Այս առթիւ պիտի կատարենք
նաեւ դպիրներու եւ սարկաւազի ձեռնադրութիւն, որուն համար
անհրաժեշտ է տեղւոյն այցելու հովիւի ներկայութիւնը:

Ուստի, այսու ձեզի կը հաղորդենք թէ՛ մեր փափայն է
որ Արժանաշնորհ Ծ. Տիրան ԶԿՆԿ. Փափազեան մեզի հետ ըլլայ՝ օգ-
նելու համար մեզի արարողութեանը ընթացքին:

Հաճեցէ՛ք մեր հայրական սիրտիւր ողջոյններն ու օրհ-
նութիւնները հաղորդել պատուարժան Միական Խորհուրդի բոլոր
անդամներուն:

Տիրուանդ սիրոյ ողջունի:
Եւ օրհնութեամբ
Ազօթարաբ

ՍԻՈՆ ԱՐՄԵՐՈՍԿՈՅՈՍ
Աաշնարդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1212
Ապրիլ 26, 1960

Արժանաշնորհ
Տ. Առնակ ԲՀՆՅ. Գասպարեան
Հախազահ Միսկան Խորհուրդի
Ս. Յակոբյանի Մկրտիչ Եկեղեցւոյ
Տիբրոյթ.

Սիրելի Տէր Հայր.

Երջանային Խորհրդակցական ժողովին մէջ Տէր Միսկան Խոր-
հուրդի անդամներուն կողմէ եզած յանձնարարութեան ընդառաջ երթա-
լով այսու ներքակ Ձեզի կը զրկենք ի մասին երկու տուար բացառիկ
տուրքի որոշումը զոր կայացուցած էր 1956ին Թեմական Պատգամաւորա-
կան ժողովը. եւ 1958ին Թեմական Պատգամաւորական ժողովի որոշումը
առ այդ, ինչպէս նաեւ Թեմական Խորհուրդի որոշումով Առաջնորդ Ս.
Հօր կողմէ թեմի բոլոր ծուխերուն ուղղուած թղթակցութեանց օրինա-
կութիւնները:

Կը յուսանք ութ-տաս օրէն Ձեզի զրկել 1960 վիճակագրական
տուեալներ թեմի ծուխերուն անդամակցութեան եւ Համայնքի բնակչու-
թեան: Ուշացումը անոր Համար որ տակաւին վեց-եօթ եկեղեցիներ Առաջ-
նորդարան չեն զրկած իրենց տեղեկագիրները, որոնք ստանալու Համար
դարձեալ դիմում կատարած ենք արդէն:

Այս առթիւ մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնենք Ձեզ եւ
պատուարժան Միսկան Խորհուրդիդ Հիւրընկալութեան Համար զոր ընծա-
յեցիք մեզի Երջանային ժողովին առթիւ: Խորին շնորհակալութիւն նաեւ
Պրնք. Դազեանի եւ Տէնիս Փափազեանի, որոնցմէ առաջինը մեզ տարաւ
կայարանը ու մեզի Հետ ունեցաւ Հանելի խօսակցութիւն, իսկ երկրորդը
կարգադրութիւն ըրաւ մեր վերադարձին Համար:

Ժողովին ներկայ եղող Տէր Միսկան Խորհուրդի անդամներն ու
Թեմական Պատգամաւորները, ինչպէս նաեւ բոլոր ժողովականները մեր
վրայ թողցին շատ ազուար տպաւորութիւն: Հաւնեցանք իրենց խանդավա-
ռութիւնը, նուիրումն ու թեմին մէջ իշխանութիւնը քարձք պահելու
իրենց գիտակցութիւնը:

Մնամ խորին յարգանքօք

Սուրէն Մանուէլեան
Դիւանագետ

**Քրեական Եւրոպայի Կոնգրեսի
Ոստիկանական Կոմիտեի Կարգը**

Ստեփան
Իվանովիչ Բալդևինովիչ Բալդևինով

Երկրամասերը կազմված են եվրոպայի
քաղաքային և քաղաքացիական իրավաբանական և քաղաքացիական իրավաբանական
օրենսդրության մասին և կազմված են եվրոպայի քաղաքացիական իրավաբանական
օրենսդրության մասին և կազմված են եվրոպայի քաղաքացիական իրավաբանական

Կազմված են հիմն
Կազմված են հիմն
Կազմված են հիմն
Կազմված են հիմն
Կազմված են հիմն

Եվրոպայի քաղաքացիական իրավաբանական
օրենսդրության մասին և կազմված են եվրոպայի քաղաքացիական իրավաբանական
օրենսդրության մասին և կազմված են եվրոպայի քաղաքացիական իրավաբանական
օրենսդրության մասին և կազմված են եվրոպայի քաղաքացիական իրավաբանական

Եվրոպայի քաղաքացիական իրավաբանական
օրենսդրության մասին և կազմված են եվրոպայի քաղաքացիական իրավաբանական
օրենսդրության մասին և կազմված են եվրոպայի քաղաքացիական իրավաբանական
օրենսդրության մասին և կազմված են եվրոպայի քաղաքացիական իրավաբանական

Կազմված են հիմն

Կազմված են հիմն
Կազմված են հիմն
Կազմված են հիմն
Կազմված են հիմն

1951 թ. Կոմիտեի
Ստեփան Բալդևինովիչ

Թիւ 3382
Յունուար 5, 1962

Արժանաշնորհ
Տ. Տիրան ԲՆՆՅ. Փափազեան
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Յովհաննէս Աղբախի Եկեղեցւոյ
Տիֆրոյթ.

Սիրելի Տէր Հայր եւ Գառուարժան Միական Խորհուրդ.

Ինչպէս որ Դեկտեմբեր 28ին, Ձեզի աւան մեր այցելութեան առթիւ, Միական Խորհուրդի ժողովին մէջ յայտնեցինք, այսու պաշտօնապէս կը հազարընք թէ՛ նկատի ունենալով մեր թեմի աւելի քան տասը եկեղեցիներու անհովիւ վիճակը, պարտաւորուեցանք ձեր Հովիւներէն մին անդափօսելու ուրիշ համայնք մը:

Ուստի, այժմ պաշտօնապէս կը հազարընք գառուարժան Խորհուրդից եւ Ձեզի թէ՛ ձեր Հովիւներէն Արժանաշնորհ Տ. Առնակ ԲՆՆՅ. Գառարեան կը նշանակենք Հոգեւոր Հովիւ Գրիգոր Զաւարթի մեր համայնքին, որպէս զի իր երկարամեայ հովուական փորձառութենէն օգտուելով՝ կարենայ կազմակերպել այս նոր համայնքը, որ մեծ պապայ ունի եւ երթալով կ'անի եւ կը քաղմանայ, ինչպէս նաեւ կառուցանել եկեղեցի մը տեղւոյն մեր հաւատացեալ ժողովուրդին համար, որուն կարիքը անհրաժեշտ է:

Յետ այսորիկ Ձեր համայնքին պաշտօնական Հոգեւոր Հովիւը պիտի ըլլայ Արժանաշնորհ Տ. Տիրան ԲՆՆՅ. Փափազեան:

Յարմար ժամանակին նկատի պիտի առնենք Ձեզի օգնական Ասրիաւազ մը զրկել, օգնելու համար Հովիւին, ինչպէս նաեւ կիրակօրեայ դպրոցի գործերուն: Նկատի ունենալով ձեր համայնքի մեծ թիւը եւ ընդարձակ տարածութիւնը:

Տէր Տիրան Գառուարժան նոյնպէս ազատ կ'արձակենք իսկ Ս. Լուիզի համայնքին այցելութեան պարտականութիւններէն: Իսկ Գլխավէնտի համայնքին համար կը խորհինք ուրիշ կարգադրութիւններ ընել:

Յանձնարարած ենք Տէր Առնակ Գառուարժանի որպէս զի մինչեւ Փետրուար ամսուան ընթացքին շնայ անդափօսուի իր նոր պաշտօնատեղին: Կը թելադրենք որ ի պատիւ Տէր Հօր հրահրած հաշկերոյթ մը սարքէ եւ իրեն ընծայէք արժանավայել յարգանք, Տիֆրոյթի մեր եկեղեցւոյ ու հաւատացեալ ժողովուրդին աւելի քան տասը տարի մատուցած օգտաշատ ծառայութեանց առ ի գնահատութիւն:

Մազթելով Ձեր աստուածահաճոյ գործերուն կատարելու յաջողութիւն.

Մեամբ Տիրուանց սիրոյ ոգջուծի
Ազօթարար

ՍԻՈՆ ԱՐԵՎԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Քիւ 4104
Մարտ 20. 1962

Արժանաշնորհ
Տ. Տիրան ԴՀՆՅ. Գափազեան
Հոգեւոր Հոգիւ եւ Կախազահ Միական Խորհուրդի
Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Տիժրոյթ.

Սիրելի Տէր Տիրան.

Յայտն ենք ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէ թէ ձեր Կա-
խազահութեամբ՝ 1962, Փետրուար 16ին դամարուած համայնօրդ Միական
ժողովը կատարած է Միական Խորհուրդի ժամանկի ընտրութիւն, եւ ներ-
կայացնելով թուարկութեան արգիւնքը, կը խնդրէ ընտրուած անձերուն
վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր Միական ժողովը տեղի ունեցած է Թե-
մական Կանոնադրութեան որոշադրութեանց համաձայն, եւ ընտրուած ան-
ձերը, էրբէ եկեղեցւոյդ պարտաւանայ ու Նուիրեալ անդամներ, կը վա-
յելեն ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց
անոնց ընտրութիւնը ընտրութիւնը, բաւ հետեւեալին.

Տիարք՝ Արամայիս Կարապետեան
Եզուարդ Գորգոյեան
Ժօրհ Մաշլազեան
Տաթև Տնօղեան
Հէրրի Գրգուրեան
Միհրան Հովհաննիսեան

Կը յանձնարարենք որ առաջին անգամ Առաջնորդարան դրկէ ձեր
Միական Խորհուրդի նոր գրեանի կազմի անուն-հասցէները:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ
պատուարան անդամներուն յաջող եւ արգիւնաւոր գործունէութիւն, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի շինութիւն համայնօրդ ձեր սիրեց-
եալ ժողովուրդին:

Մեամբ Տիրուածդ սիրոյ ողջունելու
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՄԵՐՈՍԿՈՅՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



St. John's Armenian Church of Greater Detroit

ՍԲ. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

REV. DIRAN PAPAIZIAN, PASTOR

22001 NORTHWESTERN HIGHWAY

PHONE 356-1910

SOUTHFIELD, MICHIGAN

25 փետրուար, 1964

Գեր, Տ. Սիոն Արք. Մանուկեան,
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
ի նիւ-եորկ, ն.-ե.,

Սրբազան Հայր,

Այսու կը փափաքիմ առանձնաբար ձեր բարձր ուշադրութեան ենթարկել
հարց մը որ կապ ունի մեր եկեղեցւոյ Հովուական գործին հետ:

Ինչպէս քաջ գիտակ էք, տրուած ըլլալով որ Տիթրոյթի մեր ծուխը
անհամեմատօրէն ընդարձակ է, եւ առանձինն Հովուի մը համար չափէն աւելի
խոշոր, տարւոյն սկիզբէն ի վեր, մեր Միական Խորհուրդին հետ համախոր-
հըրդաբար, կը շօշափենք գաղափարը եւ տեսակէտը Պէյրութի Հայ Հոգեւորա-
կաններէն Հոգ. Տ. Գէորգ Վարդապետ Կարպիսեանի, փոխադարձ թղթակցութեամբ,
զինքը Տիթրոյթ բերել տալու համար Հովուական գործով:

Այժմ որ անիկա իր վերջին նամակով փափաք եւ պատրաստակամութիւն յայտ-
նած է գալու եւ մեր հետ գործակցաբար ծառայելու մեծագոյն Տիթրոյթի Ս.
Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Առաքելական համայնքիս մէջ, ուստի մենք
ատենը հասած համարելով կը դիմենք ձերդ Սրբազնութեան որպէս զի ունենանք
ձեր արտօնութիւնը զինքը հոս բերել տալու, ինչպէս նաեւ ճամբորդատարական
կարգադրութիւնները ընելու մեր Ամերիկահայ Առաջնորդարանի խողովակով,
տրուած ըլլալով որ յիշեալը պիտի ծառայէ մեր Ամերիկահայ Առաջնորդական
վիճակին մէջ:

Իբրեւ յաւելեալ ծանօթութիւն աւելցնենք որ մենք եւ Միական Խորհուրդս
կը խորհինք որ լաւագոյնը պիտի ըլլայ Հայր Սուրբը հոս բերել տալ Այցե-
լուի վիզայով, օրինակի համար մէկ տարուայ տեւողութեամբ, եւ փոխադար-
ձաբար գոհ ըլլալու պարագային միայն իր Սթէյթըսը փոքսինքն գաղթային գո-
յավիճակը փոխել տալու համար դիմում ընել գաղթային գրասենեակը՝ անոր
եկեղեցականի հանգամանքով եւ Հովուական պաշտօնի բերումով: Ասիկա նաեւ
աւելի կը դիւրացնէ կը խորհինք անոր վիզայի ստացումը եւ հետեւաբար
ճամբորդութիւնը:

Արդ պիտի խնդրէինք ձեզմէ որ Առաջնորդարանը հարկ եղած միջոցառում-
ները ստանձնելու եւ կամ մեզի թելադրելու մեր ընելիքը որպէս զի այժմէն
գործի ձեռնարկելով յաջողցնէինք Հայր Սուրբին Ամերիկա գալուստը:

Մնամ Ձերդ Խոնարհ Աղօթակից,
Diran Papazian
Տէր Տիրան Երէց Փափազեան

Կարգ

Թիւ 11199
Մայիս 5, 1964

Արժանաշնորհ
Տ. Տիրան ԲՀՆԵ. Փափագեան
Հոգեւոր Հովիւ Ս. Զովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
եւ Նախագահ Կատարեան Միակերպ Խորհուրդի
Տիժրոյթ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք Ձեր 1964 Մարտ 31 թուակիր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Քեորուար 28ին գումարուած Տարե-
կան Միական Ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւն,
եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած ան-
ձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կա-
նոնադրութեան արամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած է
ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները՝ իբրեւ անդամ Միական
Խորհուրդի.

Տիարք՝ Հէրի Գըզըլեան
Եղուարդ Գոբգոյեան
Ճօրճ Մաշլազեան
Արթըր Գուտաբեան
Բիշարտ Վահրատեան

Կը յանձնարարենք որ յետ այսօրիկ Ձեր տարեկան տեղեկագիրը ի՞նչ
ժամանակին Առաջնորդարան դրկէք:

Այսու օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մտղթենք
Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան
տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն
համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊՈՍԿՈՒՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանճայի

Թիւ 11496
Օգոստոս 31, 1964

Արժանաշնորհ
Տ. Տիրան ԲՀՆԿ. Փափազեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Սկրտիչ Եկեղեցւոյ
Տիժրոյթ.

Սիրելի Տէր Տիրան,

Ձեր Օգոստոս 25 թուակիր նամակով կը խնդրէիք Ձեր կառուցելի եկեղեցւոյ անկիւնաքարերու օծման արարողութեան կարգացոյցը ունենալ, ըստ այնրմ կարգադրութիւններ ընելու համար:

Անցեալ Ուրբաթ գիշեր առիթ ունեցանք Պրնք. Ալէք Սանուկեանի եւ Եղուարդ Մարտիկեանի հետ խօսելու այդ մասին: Յարմար կը տեսնենք հետեւեալ կարգը. — Կիրակի առտու դուր կը պատարագէք ու մենք կը քարոզենք, արարողութիւնը յորդոր պէտք է կատարուի, որպէսզի ժամը 12ին թափօրով դուրս ելլենք եւ անկիւնաքարերու օծման կարգը կատարենք հանդիսաւոր կերպով. ասիկա առիթ պիտի ընծայէ կիրակօրեայ դպրոցի ամբողջ աշակերտութեան որպէսզի ներկայ գտնուին այս խորհրդաւոր արարողութեան:

Պէտք է ընտրես 16 անկիւնաքարերու համար 16 կնքահայրեր, 4 անկիւններու քարերերը պէտք է լաւորակ քարեր ըլլան, իսկ դրան մուտքի մարմար քարին վրայ փորագրուած պէտք է ըլլայ խաչ մը եւ թուականը:

Մուտքի անկիւնաքարին տակ պզինձէ տուփի մը մէջ պէտք է դնել հետեւեալ արձանագրութիւնը եւ Շինութեան Յանձնախումբի, ինչպէս նաեւ Միական Խորհուրդի կազմին անունները:

Իսկ պաշտօնական ճաշկերոյթը յարմար կը նկատենք որ երեկոյեան տրուի Ձեր մշակութային շքեղ սրահին մէջ եւ այդ առթիւ գործադրուի պատշաճ յայտագիր մը:

Առանձին ծրարով Ձեզի կը ղրկուի եկեղեցւոյ հիմնաքարերու օծման կարգը՝ անգլերէն լեզուով:

Մաղթելով Ձեզի յաջողութիւն Ձեր եկեղեցաշինական ձեռնարկին մէջ.

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻ ԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

Քիւ 11864
Մարտ 31, 1965

Արժանաշնորհ
Տ. Տիրան ԲՆԵՂ. Փափազեան
Հոգեւոր Հովիւ Ա. Յովհաննէս Սկրտիչ Եկեղեցւոյ
եւ Լախազահ Գառուարժան Միակեան Խորհուրդի
Տիֆրոյթ.

Սիրելի Տէր Տիրաւ.

Ստացած ենք Ձեր 1965 Մարտ 23 թուակիր տեղեկագիրը, որով
կը տեղեկացնէք թէ Ձեր Լախազահու թեմէն՝ Փետրուար 26-ին գումարուած
Ձեր Տարեկան Միակեան Ժողովին մէջ կատարուած է Միակեան Խորհուրդի
Մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը,
կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատար-
ուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք Հեռուեւելները՝ իբրեւ
անդամ Միակեան Խորհուրդի:

Տիրաւ՝ Ալպէրթ Սարգիսեան
Մարթին Արզարեան
Խաչիկ Սէմիրեան
Սուրէն Կողմանեան
Վահէ Կարէլեան
Եղուադ Եղուպեան


Կը յանձնարարենք որ Միակեան Խորհուրդի նոր գիւանդ անուո-
հասցէները Առաջնորդարան զրկէք առաջին առիթով:

Այսու, օրհնելով Միակեան Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք
Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունեու-
թեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Եկեղեցւոյց եւ ի Հոգեւոր շինու-
թիւն համայնքից մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանց սիրոյ ողջունի
Ազօ՞րարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՍՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

ՄԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ՏԻՔՐՈՅԹԻ



St. John's Armenian Church
OF GREATER DETROIT

VERY REV. YEGHISHE V. GIZIRIAN
REV. FR. DIRAN PAPAIZIAN

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE: 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN 48075

1 ՅՈՒԼԻՍ, 1966

Գե. Ս. Սիրոն Սրբազան Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Նիւ Եորկ, Ն.Ե.

Սիրելի Սրբազան Հայր,

Յայտնի է Ձերդ Սրբազնութեան որ Տիթրոյթահայութեան նախաձեռնած նոր Տաճարի կառուցման գործը մեծ թափով յառաջ կը նթանայ եւ քստ նախատեսութեան ծրագրուած ժամանակը բացման հանդիսութիւնը եւ Ս. Օծման արարողութիւնը ունենալ յառաջիկայ աշնան:

Եկեղեցաշինաց Յանձնախումբը Միական Խորհուրդի համամտութեամբ այժմէն ապահոված է զոյգ թուականներ, մին ըլլալով Սեպտ. 24-25 եւ միւսն ալ Հոկ. 22-23, սակայն Օգոստոսի կիսուն շինութեան գործին առած ընթացքէն կարելի պիտի ըլլայ վերջնականապէս որոշել ստոյգ թուականը; այն ատեն անշուշտ առաջին պատեհութեամբ ձեզի կը հաղորդուի վերջնական թուականը:

Համայնքիս ջերմագին փափաքն է որ դուք եւս ձեր մասնակցութիւնը բերէք Բացման հանդիսութեանց եւ Ս. Օծման արարողութեան, իբրեւ մէկը ոք ձեր նկատելի բաժինը բերած էք ծխական համայնքիս եկեղեցաշինական գործունէութեանց մէջ, թէ՛ իբրեւ եկեղեցւոյս նախկին բազմաշխատ Հովիւ եւ թէ՛ թեմիս երկու յաջորդական քառամեայ շրջաններու բարեշնչ Առաջնորդը, ուղղակի նաեւ մաս առնելով նորակառոյց եկեղեցւոյս Անկիւնաքարի Ձեռնդման արարողութեան հանդիսութեան մէջ որ տեղի ունեցաւ ձեր հանդիսապետութեամբ:

Ի գիտութիւն ձեզի, առանձին նամակով մը թեմիս նորընտիր Առաջնորդին, Գե. Ս. Թորգոմ Եպս. Մանուկեանի հրաւեր ուղղուած է հանդիսակատարութեան համար:

Այս առթիւ հանդերձեալ ենք օրուան յիշատակութիւնը պանծացնող գրոքոյկով մը հրապարակ գալ, որու մէջ փափաքելի է ունենալ ձեր լուսանկարը փոքրիկ պատգամի մը հետ միասին: Կը յուսանք նաեւ ապահովել Ազգիս վեհափառ Հայրապետին կաթողիկոսական կոնդակը, որու համար արդէն իսկ ձեզի դիմում եղած է եւ դուք խոստացած էք հարկ եղածը ընել կոնդակը բերել տալու համար եկեղեցւոյս Ս. Օծման բերկառիթ պատեհութեամբ:

Հայցելով Աստուծոյ օգնականութիւնը ձեր եկեղեցանուէր բազմաշխատ գործունէութեան, Այսու մնամք Համբուրիւ Ձեր Ս. Աջոյն,
Էմիլ Եփրեմ
Տ. Եղիշէ Ծ. Վ. Կիզիրեան, ՀՈՎԻԻՔ
Marcel Askerian
Մարթին Աբգարեան, ԱՏԵՆԱՊԵՏ ԾՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ
Էրազմ Բոյաջանյան
Տ. Տիրան ԲԿՏՅ. Փափագեան

Թիւ 20073
Դեկտեմբեր 15, 1967

Հոգեշնորհ
Տ. Եղիշէ Մ. Վրդ. Կիզիրեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
եւ Միապալատ Միակեան Խորհուրդի
Տիբրոյթ:

Սիրելի Հայր Եղիշէ,

Հաճախով կարգադրեմք "Յաւակիր"ի ընթացիկ տարուայ Սեպտեմբեր--Հոկտեմբեր միացեալ համարին մէջ "Միակեան Այցեելութեան Յանձնարար" վերատառութեամբ գրութիւնը:

Ուրախ ենք որ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւներն ու Միակեան Խորհուրդը, գործակցութեամբ համայնքի յայտնի գեմետրու, գործադրած է անցեալ նոյեմբեր 19-26ին "Արշարհական Առաքելութեան" նուիրուած յոյժ կարեւոր յայտագիր մը՝ ասեմապետութեամբ սիրելի ՏՅԹ. Տէնիս Փափազեանի եւ սեմեպապետութեամբ հարիւրաւոր անձերու:

Եկեղեցին ժողովուրդին մտեցնելու եւ այդպէսով հաւատացեալներուն կապը Եկեղեցիին հանդէպ ամրացնելու գաղափարը գովելի է Այս կերպով աւելի գիւրդին կ'ըլլայ եկեղեցւոյ զաւակները հրաւիրել պարտականութեան՝ համայնքի Հոգեւոր կեանքը բարախուն գործնելու եւ բարւոյցելու անստեղծ վիճակը:

Կը շնորհակարտենք Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ համայնքը եւ կը զնահատենք Հովիւներուն, Միակեան Խորհուրդին եւ ենթակայ մարմիններուն միակամ եւ նուիրեալ գործակցութիւնը, որուն արդիւնաւոր ընծայումը վստահաբար ուրախութեան եւ գահուճակութեան առիթ եղաւ թիւորիկ համար:

Կ'օրհնենք զՁեզ, Տէր Տիրանք, Միակեան Խորհուրդի անդամները, համայնքիկ մեր սրբեցեալ ժողովուրդը եւ "Արշարհական Առաքելութեան" գործին վարիչ ՏՅԹ. Տէնիս Փափազեանը:

Կը մազթենք որ Աստուծոյ օրհնութիւնը անպակաս ըլլայ ամենուկ վրայէն:

Սիրոյ ողջուելի

ՌՈՐԳՈՄ ԵԳԻՍԿՈՐՈՍ
Աւաշեորգ

Քիւ 21798
Մայիս 29, 1969

Հոգեշնորհ
Տ. Աղիշէ Ժ. Վրդ. Կիզիրեան
Հովիւ Ս. Յովհ. Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ
եւ Ստազան Ժապան Խորհուրդի
Տիթրոյթ.

Սիրելի Հայր Աղիշէ,

Առաջած ենք 28 Մայիս 1969 թուակիր 2եր նամակը: Ենորակալ ենք
Ժապան Խորհուրդի արտայայտութեան համար Հ.Յ.Ս. Կազմակերպութեան
Կեդրոնական Խորհուրդի ժողովին համար Տիթրոյթ մեր առած այցելու-
թեան առիթով:

Ուրախ ենք որ դուք յանձն առած էք զլիաւորել իսթ Սէյնթ Լուիզի
մէջ տեղի ունենալիք Առաքելութեան մասնակցող խումբը՝ Յունիս 19էն
27 օրերուն:

Վստահ ենք որ Ժապան Խորհուրդին հետ հարկ եղած կարգադրութիւն-
ները կը կատարէք այս կապակցութեամբ:

Կը մտղթենք շեզ եւ 2եր գործակիցներուն Աստուծոյ օրհնութիւնը
2եր դասասխանատու գործին մէջ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԷՇԳՈՍԱՊՊՈՍ
Առաջնորդ

Քիւ 22081
Նոյեմբեր 17, 1969

Արժանաշնորհ
Տ. Տիրան ՔՏՆյ. Փափագեան
Հովիւ Ս. Յովհաննէս Սկրտիչ Հայց. Եկեղեցւոյ
եւ Սփառահոս Ժրական Խորհուրդի
Տիբրոյթ.

Սիրելի Տէր Տիրան,

Համաձայն Ձեր եւ Ժրական Խորհուրդիդ հետ մեր ունեցած խորհրդակցութեան,
հետեւեալ կարգադրութիւնները կը կատարենք համայնքիդ կապակցութեամբ.--

1. Ձեզ կը նշանակենք հովիւ Տիբրոյթի Ս. Յովհաննէս Սկրտիչ Հայց. Եկեղեցւոյ:
2. Եզնական հովիւ կը նշանակենք Տ. Փառէն Կրդ. Աւետիքեան, որ ամսամալէս համայնքիդ մէջ պիտի ծառայէ մինչեւ 1970 Սեպտեմբեր 30 թուականը:
Հայր Փառէնի բնակութեան եւ թոշակի մասին կ'ընէք այն կարգադրութիւնները զորս մեզի յիշեց Ժրական Խորհուրդիդ տաննապետը:
3. Հովիւի եւ Եզնական հովիւի պատասխանատուութիւնները ճշդեցինք Ձեր եւ Ժրական Խորհուրդիդ հետ խորհրդակցաբար: Հաճեցէք այս մանրամասնութիւնները մերենազրել եւ օրինակները դրկել մեզի եւ Հայր Փառէնին:
4. Հայր Փառէն իր պաշտօնին պիտի ձեռնարկէ Նոյեմբեր 22, 1969էն սկսեալ:
5. Յովհաննէս Սրկ. Գասպարեանի մասին Ժրական Խորհուրդիդ խնդրանքը ներկայացուցինք ենթակային: Յովհաննէս Սարկաւազ Առաջնորդարանիս պաշտօնեայ չէ ներկայիս եւ ազատ է իրեն առաջարկուած որեւէ պաշտօն ընդունելու:

Կը մաղթենք որ հոգեւոր հովիւները եւ Ժրական Խորհուրդը գործակցաբար յառաջ տանին Տիբրոյթի մեր բազմամտամ համայնքին հոգեւոր, կրթական եւ մշակութային կեանքը, լաւագոյն կազմակերպութեամբ եւ արդիւնքերով:

Սիրոյ ողջունելի

ՔՈՐԳՈՍ ԱՐԷԸԳԻՍՈՐԳՈՍ
Առաջնորդ

Քիւ 22253
Յունուար 18, 1970

Արժանաշնորհ
Տ. Տիրան ԶԻՆՅ. Փափագեան
Հովիւ Ս. Առվհաննէս Մկրտիչ Հայց-Եկեղեցւոյ
Տիւրոյթ.

Սիրելի Տէր Տիրան,

Համեզէք մեզի գրաւոր բացատրել թէ եկեղեցւոյ շինութեան առիթով շէնքին եւ գոյից գանազան մասերու նուիրատուներու անուները ի՞նչպէս արձանագրած էք իրրեւ յիշատակարան, եւ եկեղեցւոյ շէնքին ո՞ր մասին մէջ գետեղած էք յիշատակարանը կամ յիշատակարանները: Ի՞նչ նիւթէ եւ ի՞նչ մեծութեամբ է իւրաքանչիւր յիշատակարանը: Նուիրատուներու անուները ի՞նչ կարգով դասաւորուած կամ արձանագրուած են: Նկարներ եթէ ունիք, օգտակար պիտի ըլլայ եթէ նմոյշներ ունենանք: Իսկ ճարտարապետի գծագրութիւններ եթէ կան աւելի օգտակար կ'ըլլան:

Մայր Տաճարի նուիրատուներու անուները յիշատակարաններու վրայ արձանագրելու աշխատանքի մէջ ենք, այդ պատճառաւ անհրաժեշտ են վերիյիշեալ տեղեկութիւնները, նաեւ որեւէ տեղեկութիւն որ կրնաք թելադրել:

Եկեղեցւոյ մկրտութեան աւագանը շինող ճարտարագէտէն պատասխան չենք ստացած Մայր Տաճարի մկրտարանի աւագանի մասին: Եթէ կարելի է հեռաձայնեցէք եւ պատասխան մը ապահովեցէք:

Կը սպասենք Ձեր շուտափոյթ տեղեկութեանց:

Մեր գոհունակութիւնը կը յայտնենք Ձեր եւ Հայր Փառէնի արդիւնաւոր գործակցութեան համար:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Քիւ 22822
Փետրուար 1, 1971

Արժանաշնորհ
Տ. Տիրան Քհնյ. Փափագեան
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ժիական Խորհուրդի
Տիբրոյթ.

Սիրելի Տէր Տիրան,

Յունուար 22, 1971ին, համայնքիդ տուած մեր այցելութեան առիթով խորհրդակցական ժողով մը ունեցանք Ձեր եւ Ժիական Խորհուրդիդ անդամներուն հետ, եւ մասնաւորաբար նկատի առինք Հովիւի եւ Ժիական Խորհուրդի գործակութեան եւ գառասխանատուութեանց բաժանման հարցեր:

Դժբախտաբար, հոգեւորականաց թիւի նոսազութեան պատճառաւ ներկայիս պիտի չկարենանք յանձնել հոգեւորական մը արամադրիչ համայնքիդ համար: Սակայն կ'ուզենք Ձեզի յիշեցնել ինչ որ խորհրդակցութեան ատեն յանձնարարեցինք: Կարելորութեան ճեսակներէ հետեւեալ կարգը կը ըշդենք Հովիւի գառասխանատուութեանց համար:

1. Կատարել կրօնական արարողութիւնները եւ խորհրդակատարութիւնները:
2. Այցելութիւններ կատարել. ա) հիւանդներուն, բ) ընտանիքներուն:
Ընտանիքներուն այցելութիւնը պէտք էր կատարել եկեղեցւոյ ընդհանուր հասցէացանկը աչքի առջեւ ունենալով: Կարելոր է որ ծիականները գիտակ ըլլան թէ Հովիւը որոշ ցանկի մը համաձայն եւ ըստ կարգի պիտի այցելէ թուր ծիականներուն, հոգ չէ թէ որքան երկար ժամանակ պիտի առնէ այցելութեան կարգը:
3. Նախագահել Ժիական Խորհուրդի եւ եկեղեցական մարմիններու ժողովներուն, եւ հսկել եւ քաջալիք հանդիսանալ անոնց գործունէութեանց:
4. Ժիական Խորհուրդի իրել նախագահ, կատարել պաշտօնական հաղորդագրութիւնները, եւ պահել յարաբերութիւն ուրիշ մարմիններու եւ համայնքներու հետ:
5. Նկատի առնելով Տիբրոյթի մեր համայնքին ընդարձակութիւնը, Ժիական Խորհուրդի պարտականութիւնն է տեսնել որ Հովիւը ազատ ըլլայ ուրիշ պարտաւորութիւններէ, զանազան յանձնառութիւններ կազմուին եւ պաշտօնեաներ ապահովուին, որպէս զի վերոյիշեալ կարելոր պարտականութիւնները աւելի արդիւնաւոր կերպով կատարուին:

Կը մտղթենք Աստուծոյ օրհնութիւնը անպակաս ըլլայ Ձեր եւ համայնքիդ բոլոր անդամներուն վրայէն:

Սիրոյ ողջունիւ

ՄԱՐԿՈՍ ԱՐՔԵՎԻՍԱԿՈՎԱՍ
Առաջնորդ